

է բռնկել, մի համատարած հրդեհ, որի հնոցը Մոսկուան է: Համայնավարական ոչինչ կայ, ինչպէս առաջի, արիւնի ու կատաղութեան այդ խառնարանի մէջ: Լինելութեան մի մութ բընազդ է, որ լաւայի պէս գուրս է ժայթքում աւերելով եւ արգանդը ծնող մօր, — իր հայրենիքը — եւ ամէն ինչ իր շուրջը: Իւրատեսակ ցեղային զարթնումն, ուր աւերածի տենդը աւելի հզօր է, քան ստեղծագործական աշխատանքի, ու իրական ազատագրութեան տենչը: Արեւմուտքի դէմ ծառայած՝ սակայն նրա քաղաքակրթութիւնն են երազում. աւերում են այն՝ ինչ զաղտնապէս իրենց բուռն տենչանքների առարկան է նման այն սիրահարներին, որոնք խանդառութեան մի խելայեղ վայրկեանին իրենց սիրած կինն են խեղդամահ անում:

Յեղային զիտակցութեան բռնկումները միշտ էլ աւերիչ են ու վանիչ, երբ մի ժողովուրդ անմասն է մնացել Սոկրատից մինչեւ Կանտ ձգուող մարդկային մտքի ոսկէ շղթային: Դարերի քնից ընդոստ զարթնած բարբարոսութիւնը, որ իւրացնում է ժամանակակից քաղաքակրթութիւնից միմիայն ոչնչացումի ու աւերածի տեխնիկ միջոցները — պայթուցիկ նիւթ ու կատարելագործուած հրազեններ — ապա նա դառնում է արհաւիրք պատմութեան, յանուն ինչ զաղախարի եւ ոտքի ելնի: Ապացոյց Թուրքիան հին՝ թէ նոր, Իտալիահատական՝ թէ քեմալական, Պալիֆայական՝ թէ հանրապետական:

Եւ խորհել, որ կարմիր Մոսկուան է պինում ասիական բարբարոսութեան բազուկը, նա է հրահրում ամենամութ, ամենաւերիչ բընազդները, նա է խաւար ցեղերին ոտքի հանում արեւմտեան քաղաքակրթութեան դէմ յանուն... Համայնավարութեան, յանուն պրոլետարիատի... Ահա այստեղ է մեր օրերի մեծագոյն պարադօքսը, տարամբժ ու զառանցական, որ բոլշեւիկեան վրիպումներից ամենէն ճակատագրականն է լինելու Կրեմլինի վարիչների համար:

Եւ մինչեւ այդ՝ Արեւելքը պիտի շարունակի այնպիսի ուռուական ուրազանի շունչով:

* * *

Քաղաքակիրթ արեւմուտքը բոլշեւիզմի առջեւ յանկարծակիի եկած՝ նախ մնաց ակնապիչ ու շուարած: Երեւոյթը խոտվիչ էր. այնուամենայնիւ նա փորձեց իր սեփական անցեալի մէջ այս անօրինակ յեղափոխութեան ընդհանուր օրէնքներ գտնել: Յունա-հռոմէական աշխարհը, որի ժառանգն է այսօրուան քաղաքակրթութիւնը, անձանօթ չէ այժմու յանդուգն յեղաշրջումներին ու արիւնոտ ցընցումներին, որոնք յաճախ ընթացիկ պատմութեան հիմքն են դրողէլ: Ֆրանսիական մեծ Յեղափոխութիւնը ակաւին իր դարուկէսը չի բոլորել: Քաղաքակիրթ ազգերը բոլշեւիկեան յեղափոխութեան մէջ պահ մի փորձեցին տեսնել իրենց սեփական պատմութեան տրամաբանական մէկ արտայայտութիւնը, թէկուզ տարամբժօրէն խիզախ:

Համայնավարութիւնը անձանօթ չէր Եւրոպային. դեռ 1871 թուին, Պարիզում Տիւրի կառավարութիւնը տասնեակ հազարներով կոմունիստներ ջարդեց Pere Lachaise-ի գերեզմանատանը: Ոչինչ զարմանալի, որ այդ պատմական ահագին սխառից կէս դար յետոյ եւրոպական մի այլ երկրում — յատկապէս Ռուսաստանում — համայնավարական յեղափոխութիւն բռնկուի:

Քաղաքական, անտեսական ու արդիւնաբերական յետամնաց պայժմանները արժանապէս չը դնահատուեցին, հաշուի չառնուեցին. Ռուսիան միշտ համարուել է անօրինակութիւնների երկիր, ուր ամէն ինչ եւ ամէն օր հնարաւոր է:

«Քաղաքական ընդհանուր ըմբռնումներ կան, — ասում էր ինձ վերջերս Ֆրանսացի մեր մի ականաւոր բարեկամ եւ արեւելագէտը, — որոնք միանգամայն հեշտութեամբ կարելի է կիրառել ամէն երկրում, բայց ոչ Ռուսիայում. խորհրդաւոր ու ապշեցուցիչ անակնկալների երկիր է այն»:

Կարծեմ քարեկամս իրաւունք ունէր: Եւ յետոյ հասարակական զանգուածների յեղյեղումներն էլ մարդկային խառնուածքի պէս անբացատրելի քմայքներ ունին, ազգերի, ինչպէս եւ անհատների հոգեբանութիւնը միշտ էլ նոյնաման ու անյեղլի օրէնքներ չունի եւ